# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

## ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. **Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը՝**
   Քնարիկ Եդիգարյան, Միջազգային համագործակցության վարչության Եվրասիական տնտեսական միության և Եվրասիական տնտեսական միության անդամ-պետությունների հետ համագործակցության բաժնի ավագ մասնագետ
2. **Գործուղման վայրը և ժամկետը՝**
   Չինաստանի Ժողովրդական Հանրապետություն, ք. Պեկին և ք. Չանշա, 2024թ. նոյեմբերի 12-29-ը
3. **Հրավիրող կողմը՝**
   Չինաստանի Ժողովրդական Հանրապետության կառավարություն, ՉԺՀ կոմերցիայի նախարարություն
4. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝**
   Գործուղման նպատակն էր «Չինաստանի կառավարության արտոնյալ վարկերը զարգացող երկրների համար» խորագրով դասընթացին մասնակցությունը, Չինաստանի կառավարության կողմից տրամադրվող նոր վարկատեսկաներին ծանոթանալը, դրանց ներգրավման ընթացակարգերի վերաբերյալ գիտելիքներ ձեռք բերելը: Նշյալ դասընթացին մասնակցությունը հնարավորություն է տվել զարգացնելու մասնակիցների ոլորտային գիտելիքներն ու հմտությունները, որոնց անհրաժեշտությունը բխում է միջազգային համագործակցության վարչության նախատեսվող վերակազմակերման արդյունքում չինական կողմի հետ կապերի խորացման թիրախավորմամբ:
5. **Քննարկված թեմաները՝**
   - **Չինաստանի բարեփոխումները, անցումը բաց տնտեսական համակարգին, վերափոխման ուղին:** Թեմայի շրջանակում ներկայացվել է Չինաստանի Ժողովրդական Հանրապետության պատմությունը, քաղաքակարթությունը, զարգացման հիմքում դրված գաղափարախոսությունը, մարտահրավերները, որոնց առաջ կանգնած է եղել պետությունը, դրանց հաղթահարման ուղիները, փակ տնտեսությունից դեպի բաց տնտեսություն առավել անցնցում անցման ուղիները, ներկայիս զարգացման ընթացքը,

Չինաստանի ֆինանսնտնտեսական կապերը զարգացող երկրների հետ: Դասախոսության ընթացքում անդրադարձ է կատարվել Չինաստանի տնտեսության ոլորտների ներկայիս իրավիճակին, այդ թվում՝ արդյունաբերությանը, գյուղատնտեսությանը, կրթական համակարգին, առողջապահությանը, ենթակառուցվածքներին, սոցիալական և ֆինանսական հատվածներին, ինչպես նաև Չինաստանի աշխարհագրությանը և վիճակագրական տվյալներն:

- **«Մեկ գոտի, մեկ ճանապարհ» նախաձեռնությունը և գնահատականը:** Սույն թեմայի շրջանակում ներկայացվել է նշյալ նախաձեռնության պատմական ակնարկը, համեմատականներ են տարվել «մետաքսի» ճանապարհի հետ, քննարկվել են դրանից ակնկալվող և արդեն իսկ ստացված արդյունքները, այն մարտահրավերները, որոնց առաջ կանգնել է նախաձեռնությունը կառուցման և ընդլայնման ընթացքում: Միաժամանակ մասնակիցներին ներկայացվել է, թե յուրաքանչյուր երկիր ինչպիսի տնտեսական շահ կարող է հետապնդել «Մեկ գոտի, մեկ ճանապարհ» նախաձեռնությանը միանալով:
- **Արտաքին ֆինանսական աջակցության դերը զարգացող երկրների ազգային տնտեսությունների զարգացման համատեքստում:** Քննարկվել են պետությունների արտաքին ֆինանսավորման տեսակները, աղբյուրները, գործիքակազմը համապատասխան օրինակներով: Ուսումնասիրվել է Չինաստանի փորձը՝ որպես արտաքին ֆինանսավորման միջոցով տարատեսակ մարտահրավերներ հաղթահարած զարգացող պետություն: Քննարկվել են մասնակից պետություններից մի քանիսի մասնավոր օրինակներ, դրանցում ներդրված արտաքին ֆինանսավորման մեխանիզմները, վերջիններիս միջոցով իրականացված խոշոր նախագծերը:
- **Չինաստանի կողմից տամադրվող ֆինանսական աջակցությունը զարգացող երկրներին:** Դասընթացի մասնակիցներին ներկայացվել են Չինաստանի կողմից կամ Չինաստանի ֆինանսավորմամբ իրականացվող նախագծերը, այն ֆինանսական գործիքները, սկզբունքները և մեխանիզմները, որոնք կիրառում է Չինաստանը զարգացող երկրներին ֆինանսական կամ տեխնիկական աջակցություն տրամադրելիս, ինչպես նաև աջակցության հիմնական տեսակները, դրանց տրամադրման պայմանները, ընթացակարգերի ճանապարհային ուղին և ներգրավված սուբյեկտները:

- **Չինաստանի արտահանման և ներմուծման բանկը (այսուհետ՝ Բանկ):** Ներկայացվել են Բանկի կառուցվածքը, գործառույթները, դրան պատկանող հիմնադրամները, ֆինանսավորման աղբյուրները, վերջինիս կողմից իրականացվող նախագծերը, Բանկի հետ համագործակցության յուրահատուկ սկզբունքներն ու պայմանները:
- **Չինաստանի կառավարության կողմից տրամադրվող արտոնյալ վարկեր:** Քննարկվել են Չինաստանի կառավարության կողմից զարգացող երկրներին տրամադրվող արտոնյալ վարկերը և դրանց տեսակները (concessional and preferential loans), դրանց միջև առկա տարբերությունները: Քննարկումը ծավալվել է Չինաստանի Արտահանման և ներմուծման բանկի (China EXIMBANK) գործառույթների շրջանակներում: Ներկայացվել է այն ճանապարհային քարտեզը, որով իրականացվում է վարկերի ներգրավման կամ տրամադրման գործընթացը, մանրամասն ներկայացվել են բոլոր այն կառույցների գրծառույթները, որոնք ներգրավված են վարկային շղթայում:
- **Չինաստանի կառավարության արտոնյալ վարկերով իրականացված ծրագրեր:** Մանրամանս անդրադարձ է կատարվել տարբեր երկրներում Չինաստանի արտոնյալ վարկային քաղաքականության շնորհիվ իրականացված նախագծերին, դրանց լուծած ռազմավարական խնդիրներին, դրանցից բխող տնտեսական օգուտներին:
- **Ենթակառուցվածքային ներդրումներ և ֆինանսական մոդելներ:** Քննարկվել են ենթակառուցվածքների զարգացման դերը զարգացող երկրների տնտեսության և բարեկեցության համար, մատնանշվել են տարբեր զարգացող երկների փորձը ներդրումների ներգրավման հարցում, անդրադարձ է կատարվել բիզնես մոդելների, որոնց միջոցով հնարավոր է լուծել զարգացող երկրների առաջ ծառացած խնդիրները:

6. **Հանդիպումներ, ելույթներ, բարձրացված և քննարկված հարցեր՝**

Գործուղման ընթացքում նախանշված ելույթներ չեն եղել, սակայն հընթացս Քնարիկ Եդիգարյանը մասնակցել է Միջազգային ծառայողների ակադեմիայի կողմից կազմակերպված և չինական «Հաննան ԹիՎի» հեռուստաընկերության ուղիղ եթերում հեռարձակվող «Մեկ գոտի, մեկ ճանապարհ» մշակութային համերգին՝ հանդես գալով որպես հաղորդավար: Համերգից հետո իրականացված ճեպազրույցի ընթացքում հակիրճ ներկայացվել են հայ-չինական համագործակցության հնարավոր ուղիները:

7. **Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը:**
   Դասընթացի ընթացքում որոշման ընդունում կամ փաստաթղթերի ստորագրում նախատեսված չէր:
8. **Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.**
   Դասընթացի ընթացքում կազմակերվել է թիմային և դերային խաղեր, որոնց ընթացքում մասնակիցների կողմից առաջարկվել են Էքսիմ բանկի կողմից իրականացվող նախագծերում հաշվի առնել մի շարք գործոններ զարգացող երկրներում առավել մեծ արդյունքներ գրանցելու համար: Էքսիմբանկի ներկայացուցիչները իրենց հերթին նշել են, որ հաշվի կառնեն առաջարկությունները և իրականցվող նախագծերին ներկայացվող պահանջների ցանկում կավելացնեն վերջիններս, ինչը կավելացնի դրանց թափանցիկությունը, հաշվետվողականությունը, հասցեականությունը և արդիականությունը:
9. **Ստորագրություն, ամսաթիվ:**

2.12.2024թ.